

ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Տիգրան Զաքարյանը

Սույն թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Տիգրան Զաքարյանը:

Տիգրան Զաքարյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի զարգացման ծրագիրը. «Նախատեսվում են արեզակնային էներգետիկայի և ինֆրակարմիր ճառագայթման ընդունիչների համար նյութերի ուսումնասիրում, ռադիոաստղագիտական ուսումնասիրություններ՝ արդիականացնելով առկա 7 մետրանոց ռադիոդիտակների համալիրը, ռադիոլուկացիոն սպեկտրների կառուցվածքի ուսումնասիրում, ինչը թույլ կտա կատարել թիրախների նույնականացում, ուսումնասիրություններ ռադիոալիքների տարածման բնագավառում»: Ըստ Տիգրան Զաքարյանի՝ նախատեսվում է ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ գերազանցության կենտրոնի ստեղծում կիրառական ծրագրերի իրականացման համար, թվային կառավարմամբ ֆրեզերային հաստոցի ձեռքբերում, կլիմայական և մեխանիկական փորձարկումների լաբորատորիայի կազմակերպում: Ինստիտուտը շարունակելու է երիտասարդ կադրերի պատրաստումը:

Տիգրան Զաքարյանը ծնվել է 1964 թվականին Երևանում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոտեխնիկայի ֆակուլտետը: Նրա գի-



տական նախասիրություններն են՝ ֆիզիկական գիտափորձի ավտոմատացում և հեռակառավարում, ռադիոլուկացիոն համակարգեր և ազդանշանների թվային մշակում: Նա ավելի քան 30 գիտական աշխատությունների հեղինակ է:

Տիգրան Զաքարյանը ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնը ստանձնել է 2017 թվականին: Սինչ տնօրենի պաշտոնում ընտրվելը նա եղել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի լաբորատորիայի ղեկավար, 2008-2016 թվականներին՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ռադիոտեխնիկայի և կապի ամբիոնի վարիչ:

**ՀՀ ԳԱԱ գիտության
հանրայնացման և
հասարակայնության հետ
կապերի բաժին**